ՑԼԱԳԼՈՒԽ ԿՈԹՈՂՆԵՐ ՎԱՐԴԵՆԻՍԻ ԼԵՌՆԵՐԻՑ ԵՎ «ՎԻՇԱՊԱՔԱՐԵՐԻ» ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Օ. Ս. ԽՆԿԻԿՅԱՆ

1986 թ. Մարտունու շրջանի Մադեն գյուղի «Ատտաշ» կոչվող ամառային արոտավայրում, որը ջրառատ, ընդարձակ տարածք է, նկատեցինք բազալտե «վիշապաքար»։ Վերջինս, ըստ տեղում աշխատող տրակտորիստների վկայության, ծածկված լինելով հողի լիցքով, հայտնաբերվել էր 1982 թ. հողաշինական աշխատանքների ընթացքում և իրենց կողմից ուղղահայաց կանգնեցվել մայր հողում։ Լիցքի մնացած մասի, ինչպես և տեղանքի զննումից այլ նյութեր չհայտնաբերեցինք, ինչը և թույլ չտվեց հստակեցնել մ.թ.ա. II—I հազ. թվագրվող այսօրինակ կոթողների ժամանակագրությունը[1]։

Ուղղանկյունաձև, կոպտատաշ այս կոթողի (բարձր.՝ հողի մակերևույթից 175 սմ, լայն.՝ 60 սմ) վերին մասում երինջի գլխի նմանությամբ բարձրաքանդակն է. հստակ արտահայտված են ականջները, աչքերը, ռնգները և բերանից հոսող, օձագալար տեսք ունեցող եռաշար ջրաշիթերը։ Գլխի երկու կողմերից, անմիջապես կոթողի եզրերից կախված են կենդանու առջևի, երկճղանի վերջույթները։ Ավելի վաղ նման մի կոթող Եղեգնաձոր էր բերվել Սուլեմի լեռնանցքից և կանգնեցվել քաղաքային այգում։ Անհամեմատ նուրբ, կատարյալ և բծախնդիր աշխատանքի արդյունք (այս հանգամանքը հավանաբար մատնանշում է կոթողի երիտասարդ տարիքը) այս կոթողի (բարձր.՝ 2,7 մ, լայն.՝ 1,1 մ) վերին մասում նույնպես ցլագլուխ բարձրաքանդակն է, պարզ արտահայտված են ականջները, ռնգները, բերանից հոսող ջրի եռաշար շիթերը և գալարաձև եղջյուրները, որոնք բնորոշ են խոյին, թերևս գոմեշին։ Այս մանրամասները քանդակին միաձույլ կենդանու գլխի տեսք են հաղորդում։ Նորույթ է ականջների միջև, գլխի կենտրոնից կոթողի եզրին միացող սեպաձև բարձրաքանդակը։ Կենդանու առջևի վերջույթները չեն պատկերված։

Բազմիցս անդրադառնալով «վիշապաքարեր» կոչված այսօրինակ կոթողների ուսումնասիրությանը՝ հետազոտողները տարբեր կարծիքներ են արտահայտել։ Այսպես, 1885—1906 թթ. Ատրպետը ձկնակերպ ու ցլագլուխ կոթողներ հայտնաբերելով Արագածի գագաթի Կաղնեֆեր լճակի, Սևանի հարավակողմի լեռնաշղթայի ճահճուտներում ու ավազուտներում, Ջիարեթ ու Հովտակ (Այղր) լճակի ափերին, ինչպես և Սրբահան ու Օրգոր գետերի ակունքներում, այն կարծիքը հայտնեց, թե հնարավոր է, որ դրանք կապված լինեն մայր դիցուհու՝ Անահիտի պաշտամունքին և հիշեցնում են աքքադա-շումերական Էա դիցուհուն և Օաննես ծովագնացին[2]։ Այս հայտնագործություններին 1909 թ. հետևեցին Ն. Մառի ու Յա. Սմիռնովի հետազոտությունների արդյունքները, որոնցից պարզ դարձավ, թե ուսումնասիրողները Գեղամա լեռներում հայտնաբերել են ժամանակին հողի լիցքով ծածկված ձկնակերպ ու ցլագլուխ 23 նման կոթողներ։ Ձկնակերպ կոթողները «վիշապներ» անվանելով՝ հետազոտողները այն կարծիքն արտահայտեցին, թե

---

1 Ուշադրություն է գրավում ձկնակերպ կոթողների որոշ նմուշների աչքերի ձևը (կեռիկավոր շրջան)։ Այս զարդը բնորոշ է միջին բրոնզեդարյան գունապատ խեցանոթներին, իսկ ցլակերպ քանդակները հայտնի են մ.թ.ա. III հազ.։

2 Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1926, էջ 38—62։

դրանք ջրի պաշտամունքին են առնչվել։ Ընդ որում, Ն. Մառը, շեշտելով անծանոթ մի նոր աշխարհ բացահայտող այսօրինակ կոթողների որոնումների անհրաժեշտությունը, ապացուցելով սկզբնապես դրանց ուղղահայաց դիրքով կանգնեցված լինելու, ինչպես և ծիսական զոհաբերությանն առնչվելու հանգամանքը, որի արձագանքները պահպանվել էին մեր օրերում, հավանական համարեց դրանց՝ ցեղային տոտեմներ լինելն ու Դագոն աստծու պաշտամունքին առնչվելը[3]։ Ինչ վերաբերում է Յա. Սմիռնովին, ապա նա, մատնանշելով վիշապի մեծ օձ կամ հսկա ձուկ իմաստն արտահայտելու հանգամանքը, այդ կոթողները կապեց «վիշապաքաղ Վահագնի» պաշտամունքին՝ անտեսելով, սակայն, որ. «Ոմանք զարեգակն պաշտեցին, և Վահագն կոչեցին...»[4] ու ընդունելով, որ Վահունիները, «...գտնելով Հերակլեսի աւրէնը..., իրենց նախնի Վահագնը համարեցին»[5], մերժեց այդ կոթողները աստվածության կուռք դիտելը[6]։ Դա, մեր կարծիքով, սխալ է։ Հետագայում նման կոթողներ հայտնաբերվեցին և այլ վայրերում, ինչը և նոր խթան դարձավ դրանց հետազոտման համար։ Այսպես, Բ. Պիոտրովսկին, գծագրելով դրանց տարածման սահմանները (Հայկական լեռնաշխարհ), հանգեց այն կարծիքին, թե դրանք կապված են ոռոգման հետ և որ վիշապները, լինելով հարստության, ջրի ու բերրիության, սկզբնապես բարի աստվածություն, քրիստոնեության ընդունումից հետո միայն փոխարկվեցին չար ուժերի։ Դրանք սկզբնապես լեռներում գտնվող ակունքների և ջրավազանների պահապաններ են համարվել[7]։ Համաձայնելով, որ այդ կոթողները ջրի և ոռոգման աստվածություններ են, Մ. Աբեղյանը քննադատեց վերոհիշյալ հեղինակներին, գտնելով, թե նրանք, չապացուցելով վիշապ-դեմոնի՝ պտղաբերության և ջրի հովանավոր լինելը, իրենց եզրակացությունները բխեցրել են պայմանականորեն ընդունված «վիշապ» բառից։ Հետևաբար, այն պնդումները, թե վիշապին զոհաբերություն են կատարել կալերում, թե վիշապը քրիստոնեության ազդեցությամբ է չար ուժի փոխարկվել և, կապված լինելով ձկան հետ, աղբյուրների հովանավոր է եղել, ոչնչով չհիմնավորված եզրակացություններ ու հայտարարություններ են սոսկ։ Մ. Աբեղյանը կարծում է, որ այդ կոթողները առնչվել են այնպիսի աստվածության, որը, ձկնա-

---

3 Փյունիկացիների Դագոնը (ուգարիտա-աքքադական Դագանը) նշանակում է և՛ հասկ, և՛ ձուկ, ըստ այդմ էլ ենթադրվում է, թե այն եղել է երկրագործությունը կամ ձկնորսությունը հովանավորող աստված (ձկնորսությանը վերաբերող կարծիքը մենք չենք ընդունում, որը կհիմնավորենք շարադրանքում)։ Սկզբնապես առնչվել է պտղաբերության և փոթորկի աստված Բաալին։ Դագոնը քանանցիների պանթեոնի, հավանաբար, գերագույն աստվածն էր, իսկ Բեթ-Շան քաղաքում (հյուս. Պաղեստին) այն կապված էր Աստարտեի հետ։ Դագոնի կինը Շալա աստվածուհին էր, որը Ասորեստանում Ադադ աստծո կինն էր դիտվում (Տե՛ս Мифы народов мира, т. I, М., 1980, с. 346. Այդուհանդերձ, որքան արական, նույնքան իգական երկսեռ Դագոնը վիշապաձուկն է, կետը, Լեվիաթանը (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ), հ. Բ., Ե., 1981, էջ 824)։

4 ՆՀԲ, հ. Բ, էջ 771։

5 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն (Ներած. և ծանոթություն. Ս. Մալխասյանի), Ե., 1981, էջ 160։

6 Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вишапы (Труды государственной академии истории материальной культуры, 1931, т. I, с. 61—104). Ձեսի և մահկանացու Ալքմենեի միրձեցումից ծնված դյուցազն Հերակլեսը (ինչ իմաստով, որ ընդունում է Յա. Սմիռնովը), հոր ինքնությունը իմանալով հանդերձ, իր իսկ խոստովանությամբ չհամարձակվելով իրեն երկնայնականների հավասար համարել, ծովահրեշին սպանեց Տրոյայի թագավոր Լաոմեդոնի դստերը՝ Հեսիոնեին փրկելու համար, իսկ Վահագնը գերագույն աստվածություններից էր, որի ծննդի ժամանակ երկիրն ու երկինքն էին երկնում (Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, նշվ. աշխ., էջ 144)։

7 Б. Б. Пиотровский, Вишапы-каменные статуи в горах Армении, Л., 1939, с. 5—38.

կերպ լինելով, առնչվել է թռչունների ու երինջների հետ։ Այդ աստվածությունը, հեղինակի կարծիքով, Իշտարն է, Դերկետոն, Աստարտեն, Ափրոդիտեն, Աստղիկ-Անահիտը։ Այդ կոթողները, կարծում է հեղինակը, դրվել են ջրի ակունքների մոտ երաշտ տարիներին՝ իբրև յուրատեսակ «ցասման խաչեր», ինչը և դրանց տարբերակներով հանդես գալու պատճառն է[8]։

Մ. Աբեղյանի և վերոհիշյալ մյուս հեղինակների կարծիքը չի բաժանում Գր. Ղափանցյանը։ Նկատելով, որ սոսկ սիրո և գեղեցկության աստվածուհի Աստղիկը, որի պաշտամունքը միայն Տարոնում էր տարածված, ամենևին կապ չունի ցուլի, արագիլի, ձկան և օձի հետ, նա ավելի հավանական է համարում այդ կոթողների՝ հատիկի աստվածություն (օր., Օսիրիս, Թամմուզ) լինելը, որի կապը գարնան և ջրի հետ ակնհայտ է։ Գր. Ղափանցյանը կարծում է, որ այդ գծերը բնորոշ են Արա Գեղեցիկին, որի կերպարում խտացված են ջրին և ցանքսին առնչվող պատկերացումները։ Վերջիններս էլ արտացոլված են կոթողների երկու տեսակներում (ջուրը՝ ձկան, ցուլը՝ գարնան ու ցանքսի, իսկ արագիլները՝ գարնան և պտղաբերության)։ Հեղինակի կարծիքով այդ կոթողները երևան են եկել մ. թ. ա. XVIII—XVII դդ.[9]։

Գր. Ղափանցյանի կարծիքը չի ընդունում Բ. Առաքելյանը։ Կոթողները թվագրելով մ. թ. ա. XVII—XVI դդ. և համաձայնելով, որ դրանք արտացոլում են բնության զարթոնքին, բուսականությանը, ջրին, երկրագործությանը և արգասավորմանը աղերսվող պատկերացումները՝ նա կարծում է, որ դրանք չէին կարող այդքան վաղ արտացոլվել Արա Գեղեցիկի կերպարում։ Այդուհանդերձ, հեղինակը ձեռնպահ է մնում եղած կարծիքներին որևէ լրացում կատարելուց և կամ նոր կարծիք արտահայտելուց՝ նշելով, թե դա հետագայի խնդիր է[10]։ Անմիջապես ավելացնենք, որ «...առանց որևէ մեկնության և նախնական դիտողության նպատակի» Լ. Բարսեղյանը, Ժ. Խաչատրյանը և Ա. Քալանթարյանը, որոնք Գեղամա լեռներից և Արագածից հայտնաբերել էին հինգ նոր կոթողներ, հանդես եկան հոդվածով[11], իսկ Ս. Եսայանն ու Ա. Շահինյանը բավարարվեցին նախորդ հետազոտողների կարծիքների ամփոփ հիշատակմամբ՝ համաձայնելով, որ կոթողներն արտացոլում են ջրի, պտղաբերության պաշտամունքն ու բնության հակամարտող ուժերին առընչվող պատկերացումները[12]։

Միանգամայն այլ է Աս. Մնացականյանի դիրքորոշումը։ Համաձայնելով Մ. Աբեղյանի՝ կոթողները յուրօրինակ «ցասման խաչեր» լինելու մտքին, որոնցով մարդիկ ցանկացել են կանխել բնական պատուհասները, հեղինակը նշում է, որ բարի հանդիսացող ձուկը ջրի խորհրդանիշն է, որը կյանքի հիմքն է, և հետևաբար այդ կոթողները կապվում են թե՛ Աստղիկի և թե՛ ցուլի կերպարով հանդես եկող Արա Գեղեցիկի (=Վահագնի) հետ, որը չարահալած լինելով, խտացնում է գարնան, պտղավորող ուժի, բնության զարթոնքի գաղափարները, որոնք վերջին հաշվով հանգում են «բարի և չար» ուժերի միջև տեղի ունեցող վիշապամարտի դիցաբանությանը[13]։

---

8 Մ. Աբեղյան, «Վիշապներ» կոչված կոթողներն իրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, երկեր, հ. է, Ե., 1975, էջ 151—167։

9 Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Ե., 1944, էջ 136—152։

10 Б. Н. Аракелян, Урартская клинообразная надпись из Гарни (Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1966, № 2, էջ 290—293։

11 Լ. Ա. Բարսեղյան, Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Ա. Քալանթարյան, Նորահայտ պաշտամունքային կոթողներ Գեղամա լեռներից [ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, (հաս. գիտ.), 1964, № 8, էջ 85—88]։

12 Ա. Ն. Շահինյան, Վայոց ձորի վիշապ-կոթողները (ՊԲՀ, 1976, № 1, էջ 286—289)։ С. А. Есаян, Скульптура древней Армении, Е., 1980, с. 19—21.

13 Աս. Մնացականյան, «Վիշապ» քարակոթողների և վիշապամարտի դիցաբանության մասին [ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1952, № 5, էջ 88—93]։

Այլ է Է. Խանզադյանի տեսակետը։ Ձուկը, եզն ու օձը լուսնի խորհրդանիշներ համարելով՝ նա կարծում է, որ սկզբնապես դրանք կապվել են մայր աստվածությանը և հետագայում միայն, երկրագործության ու անասնապահության զարգացմանը զուգընթաց, առնչվել են հայր աստվածությանը։ Հեղինակի խոսքերով. «Վիշապ կոթողները... հավանաբար մ. թ. ա. V—IV հազ. ներկայացվել են միայն ձկան տեսքով... զարգացման հաջորդ փուլում է, որ ձկնակերպ կոթողների վրա պատկերվում է եզան գլուխը»։ Երկրորդ փուլում է, որ դրանք առնչվել են Վիշապաքաղ Վահագնին։ Այդ կոթողների միջոցով մարդը ջուր, պտղաբերություն և վերածնունդ է աղերսել[14]։

Կոթողները տարերքի և պտղաբերության հետ են կապում նաև Հ. Մարտիրոսյանն ու Հ. Իսրայելյանը՝ նշելով, որ հնում վիշապը ընկալվել է իբրև ամպրոպ, որոտ ու կայծակ, որը պատկերվում էր ցլի, ձկան, օձի կերպարներով[15]։ Կրկին անդրադառնալով այս հարցին՝ Հ. Իսրայելյանը այդ կոթողների մեջ տեսավ նաև տիեզերքի երեք տարրերի գաղափարը, նշելով, թե քանդակված կենդանիները մարմնավորում են երկինքը, երկիրն ու ջուրը (ձուկը՝ օվկիանոս, ցուլը՝ երկինք, ամպրոպ, որոտ), որոնցից ջուրը ուրույն մի հիմք է, ակունք՝ մնացած բոլոր պատկերների[16]։

Համակարծիք լինելով ջրի, բերրիության, բնության զարթոնքի, տարերքի հետ կապված լինելու մտքին՝ հետազոտողները հիմնականում ուշադրությունը բևեռել են առասպելների վրա և, առանձնապես չծանրանալով ձուկ, ցուլ իմաստի բացահայտմանը[17], հակադրվում են կոթողների՝ ա) անվան, բ) անձնավորման որոշակիության (աստված, աստվածուհի, դյուցազն) և գ) տարատեսակության պատճառի (երաշտ, տարբեր գործառույթ, աստիճանական զարգացում) հարցերի շուրջ։

Պատշաճը հատուցելով կատարված աշխատանքներին՝ փորձենք ընդհանուր գծերով պատասխանել վերոհիշյալ հարցերին, պարզել կոթողների նշանակությունը, չհավակնելով հարցին սպառիչ պատասխան տալուն։

Քննադատելով բազմաստվածությունն ու նրա հետևորդներին՝ Եզնիկ Կողբացին գրում է. «Եվ ինքնագոյի ու մշտնջենականի հետ ինչպես պիտի երկրպագվեն ...արեգակը, լուսինը, աստղերը, կրակը, ջուրը, հողը, որոնք մոգերի ու հեթանոսների կողմից պաշտվում են»[18]։ Հարցի պատասխանը տալիս է ինքը՝ Ե. Կողբացին։ Նա գրում է. «...ամեն ինչ ղեկավարվում է Արեգակով և Լուսնով և գետնի վրա գտնվածներից ոչ մի բան նրանց ենթակայությունից դուրս չէ» և ապա՝ «Քաղդեացիները լուսատուների և համաստեղությունների վրա նայելով որպես արարիչների, նրանց աստվածներ համարեցին..., որ աստղերը ոչ միայն բախտավորություն ու թշվառություն են

---

14 Է. Վ. Խանզադյան, Գառնի 4-րդ, Ե., 1969, էջ 139—161։

15 Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1971, էջ 11—12, 36։

16 Հ. Ռ. Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Ե., 1978, էջ 31—33։

17 Բացառություն է կազմում Ա. Պետրոսյանի դիտողությունը, համաձայն որի, «Հետաքրքիր է վիշապների վրա պատկերված կենդանիների (ձուկ, խոյ, ցուլ, երկու արագիլներ) հնարավոր կապը կենդանակերպի Ձկներ, Խոյ, Ցուլ, Երկվորյակներ (հնարավոր է, հիմնական առասպելի խորհրդանիշները) համաստեղությունների հաջորդականության հետ։ ...Վիշապաքարերի բազմազանությունը կարելի է բացատրել նրանով, որ դրանք, հավանաբար աստվածությունների պաշտամունքի որոշիչ հատկանիշներ են։ Հեղինակը չի բացառում նաև ժամանակագրական տարբերությունները։ А. Петросян, Отражение индоевропейского корня uel—в армянской мифологии (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, № 1, էջ 65, ծան. 58)]։

18 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց (Թարգմ., ներած., ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի), Ե., 1970, էջ 34։

տալիս, այլև՝ կյանքը որոշակի թվով (տարիքով) են տալիս... և մարդկանց վարք ու բարքը, կամքը և գործերը... կապում են աստղերի հետ»[19]։ Որքանով խոսքը վերաբերում է կյանքին, պտղաբերությանը, բարեկեցությանը և այլն, Արեգակի, Լուսնի, հող ու ջրի պաշտամունքի պատճառը տրամաբանված, բնական ու հասկանալի է թվում, ինչը չի կարելի ասել աստղերի պաշտամունքի պատճառաբանվածության վերաբերյալ։ Իրոք, մի՞թե աստղերը աստվածացնելու միակ պատճառը աստղագուշակությունն է, որի համար և աղոթեցին ղրանց իբրև աստվածների։ Ասվածի լավագույն ապացույցը շումերա-աքքադական «Մեծ աստվածներ գիշերի» աղոթքն է։ Այն ցույց է տալիս, թե այդ աստվածներն են Բոցեղեն Գիբիլը, Մեծաղոր Էռան, Աղեղն ու Լուծը, Խաչն ու Վիշապը, Ձիակառքը, Այծը, Խոյը և Օձը[20]։ Թվարկված անվանումներից տեսնում ենք. որ հները, «աստղեր» ասելով համաստեղություններն են նկատի ունեցել, որոնցից մի քանիսի անվանումները անփոփոխ են մնացել, մյուսները փոխարինվել են հունա-հռոմեականներով։

Կարծում ենք, որ աստղերի՝ տնտեսության համար (կյանք, պտղաբերություն, բարեկեցություն) ունեցած նշանակությունը, դրանք աստվածացնելու սկզբնապատճառն է եղել։ Դրա լավագույն ապացույցը երկնակամարը աստղատների բաժանելու փաստն է։ Վերջիններիս անվանումները, որոնց շուրջ հյուսվել են առասպելներ, կամային են ու երևակայական։ Ընդգծենք այն ելակետային դրույթը, որ «մեռնող ու վերածնվող բնության», բնականաբար և «մեռնող ու հառնող եղանակների» հետ կապված պատկերացումները սերտաճած են աստեղատան շրջապտույտին, արեգակնածիրին կամ խավարածիրին, ինչը և լավագույնս էր դիտված նախնյաց կողմից։ Հակառակ դեպքում երկնակամարը աստղատների բաժանելու փաստը կորցնում է իր ողջ իմաստը, ավելի ճիշտ, առաջնային նշանակություն են ձեռք բերում աստղագուշակությունն ու առասպելաբանությունը, որ համոզիչ չէ։ Երկնակամարը աստղատների բաժանելը անհրաժեշտություն էր, հարկադրական քայլ, առանց որի անհնար է պատկերացնել երկրագործական աշխատանքների հաջողությունը, որոնցով էլ պայմանավորված էր մարդկանց բարեկեցությունը։ Իրոք, կենդանակերպի որևէ աստղատան անվանումի ներքո հասկանում ենք երկնակամարի մի որոշակի հատված, որտեղ Արեգակը գտնվում է որոշակի ժամանակաշրջանում։ Հետևաբար, տարվա յուրաքանչյուր եղանակ կապված է երկնակամարի որոշակի հատվածում (=համաստեղությունում) Արեգակի գտնվելու ժամանակի հետ. աստղատների բաժանման հիմնական պատճառը այս էր։ Պատահական չէ, որ Եզնիկ Կողբացին գրում է. «Արդ՝ եթե որոշ աստղեր կամ տաքերի կամ ցրտերի նշաններ են լինում, ոչ թե որպես ինչ-որ կենդանիներ (սյս և հետագա ընդգծումները մերն են—Օ. Խ.) են լինում...»[21]։ Համաձայն Անանիա Շիրակացու, փետրվարի 17-ին Արեգակը մտնում է Ձկներ, մարտի 20-ին՝ Խոյ, ապրիլի 21-ին՝ Ցուլ համաստեղությունները[22]։

Համեմատելով աստղատներից յուրաքանչյուրում Արեգակի գտնվելու ժամանակը (այսինքն, առաջին պլանում է արեգակ+համաստեղություն զուգափարը)՝ նկատում ենք, որ ներկա տեսքը չի համընկնում Անանիա Շիրակացու տվյալներին. ակնհայտ է ոչ միայն օրերի որոշակի անհամապատասխանություն, այլ որ կարևորն է՝ գարնան սկզբի և ավարտի փոփոխություն։ Բ. Թումանյանի խոսքերով. «Մի ժամանակ մարտին այն (Արեգակը—Օ. Խ.) լինում էր Խոյում, ապրիլին՝ Ցուլում։ Ընդունված է նաև, որ

---

19 Անանիա Շիրակացի, Մատենագրություն (Բազմ., ծանոթ., առաջաբան՝ Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի), Ե., 1979, էջ 79, 117։ Եղնիկ Կողբացի, նշվ., աշխ., էջ 105—108։

20 Հին Արևելքի պոեզիա, Ե., 1982, էջ 94—95։

21 Եղնիկ Կողբացի, նշվ. աշխ., էջ 189։

22 Անանիա Շիրակացի, նշվ. աշխ., էջ 250—253։

գարնանային գիշերահավասարի օրը Արեգակը մտնում է ոչ թե՝ Խոյ, այլ Ջրկիներ համաստեղությունը»[23]։ Ըստ այդմ էլ, ներկայումս գարունը ընդգրկում է, ոչ թե Խոյ, Ցուլ, Երկվորյակներ, այլ՝ Ձկներ, Խոյ, Ցուլ համաստեղությունները։ Վերջիններից Ջուկ համաստեղությունը հանդես է գալիս երկակի՝ անցնող տարվա եզրափակիչ և նոր տարվա սկիզբն ավետող ժամանակի (փետրվարի 17—մարտի 20-ը՝ Ա. Շիրակացու և փետրվարի 21—մարտի 20-ը՝ մեր օրերում) համաստեղություն։ Նշված ժամանակահատվածից փետրվարյան օրերին, մասամբ՝ մարտի սկզբին շարունակվում են սառնամանիքները, թերևս առավել սաստկությամբ, քան ձմռանը, իսկ մարտի հաջորդ օրերին սկսվում են այնպիսի եղանակներ, որոնք հիրավի արդարացնում են ժողովրդի կողմից մարտին տրված «գիժ ամսվա» բնորոշումը։ Պատկերավոր արտահայտվելու՝ դեպքում՝ հակառակվելով մոտալուտ գարնանը, ձմեռը հեշտ չի զիջում իր իշխանությունը, այլ կերպ ասած, «պատերազմ» է սկսվում Ձկան և Խոյ+Ցուլի միջև (հետաքրքիր է, որ մ. թ. ա. III հազ. բնորոշ խոյաձև զարդերն ու քանդակները հանդիպում են և հետագա դարաշրջաններում)։ Այս տեսակետից անչափ կարևոր նշանակություն են ստանում Ե. Կողբացու այն խոսքերը, որոնցից երևում է, թե հեթանոսները սատանային օդը շարժելու ու փոփոխելու իշխանություն ունեցող էություն են համարել, որի համար և «նրան այս օդի իշխան է կոչում..., որը օդը մերթ անձրևների, մերթ ձյան, մերթ կարկուտի...»[24] է փոխում։ Ինչպես տեսնում ենք, տրված բնորոշումը միանգամայն համապատասխանում է մարտին, որի տիրակալը Ջուկ համաստեղությունն էր[25]։ Հետևաբար, Ջուկը օդը շարժելու և փոփոխելու իշխանություն ուներ։ Բնական է, որ «...Զիշխանս ի ջուրս Լևիաթան արքայ ասեն», իսկ Լևիաթանը եբրայերեն վիշապաձուկն է թարգմանվում[26], այլաբանությամբ՝ Սատանայ[27], որը «եբրայեցւոց բառիցն՝ հակառակ թարգմանի, և ամենայն՝ որ բարւոյ հակառակ կայ...»[28]։ Եթե նկատի ունենանք, որ «Գիրքը վիշապ է կոչում խոշորամարմին օձը կամ ծովածին որևէ գազան... նկատի ունեմ կետերը և դելֆինները»[29] և «Օձը, որ սատանա ենք անվանում» նախադասությունները, ապա կստացվի ձուկ=օձ—վիշապ—սատանա նույնությունը։ Հետևաբար, կոթողների «վիշապաքար» անվանումը այս իմաստով սխալ չէ։ Վերջինս, սակայն կարող է թյուրիմացությունների տեղիք տալ, նույնացվելով մեկ դեպքում «Կետի», մյուսում՝ Մեծ և Փոքր Արջերի (=Սայլի) միջև ձգվող «Վիշապ» համաստեղության հետ, որի հարևանությամբ և տարածվում է Հերակլեսի համաստեղությունը։ Երկրագործական աշխատանքների համար առանձին նշանակություն չունեցող, թույլ լուսավորության աստղերից կազմված «Վիշապ» համաստեղությունը թերևս ուղևորների համար որոշակի հետաքրքրություն ներկայացներ այն իմաստով, որ նրա α աստղը (Տուբան) մ. թ. ա. III հազ. հյուսիսային բևեռացույց էր հանդիսանում։ Այս հանգամանքը, սակայն, հազիվ թե երկրագործի համար կարևորագույն նշանակություն ունենար և նրան հարկադրեր հավասարության նշան դնել Վահագնի և դյուցազն Հերակլեսի միջև։ Ասվածին ավելացնենք ժամանակաշրջանների անհամապատասխանությունները և կհամոզվենք «Վիշապ» համաստեղության առանձին նշանակություն չունենալու մեջ։ Հետևաբար, Վահագն=Հերակլես նույնացումը արտաքին, ձևական բնույթ ուներ, որը, հելլենիզմի հատկանշական գծերից մեկը լինելով,

---

23 Բ. Ե. Թումանյան, Տոմարի պատմություն, Ե., 1972, էջ 11։

24 Եզնիկ Կողբացի, նշվ. աշխ., էջ 135—136։

25 Համաձայն Ն. Յա. Մառի գիտարկումների, ձկնակերպ կոթողների մի մասը լոքոյի, մյուսները՝ լանարի նմանություն ունեն. այս հետաքրքիր երևույթի պատճառը մեզ պարզ չէ։

26 ՆՀԲ, Հ. Ա, Ե., 1979, էջ 884։

27 ՆՀԲ, Հ. Բ, էջ 823—824։

28 ՆՀԲ, Հ. Բ, էջ 698։

29 Եզնիկ Կողբացի, նշվ. աշխ., էջ 50, 80։

բնորոշվում է արևելյան հին անուններն ու ավանդությունները հունաց դիցաբանության ավանդությունների, աստվածների ու դյուցազների հետ խառնելով, համեմատելով ու նույնացնելով։ Այսպիսով, եթե խոսքը վերաբերում է համաստեղությանն ու եղանակներին, ապա թյուրիմացություններից խուսափելու նպատակով, կարծում ենք, ճիշտ կլինի «վիշապաքար» անվանումը փոխել «ձկնակերպ կոթող» անվամբ։

Այն հանգամանքը, որ այդ կոթողները իրոք կապված են Ձուկ համաստեղության հետ, հաստատվում է և այլ փաստերով։ Տվյալ դեպքում նկատի ունենք. «Իսկ աթոռն կամ բարձրութիւնք մոլորակացն են. Խոյն՝ Արեգական, Ցուլն՝ Լուսնոյն, ...Ձուկն՝ Լուսաբերին...»[30]։ Իսկ Լուսաբերը, որը «Տուն Արամազդայ և Սեւազէայ մեծարեին...», ինչպես և «Արուսեակ... մոլորակ լուսափայլս՝ նախընթաց արեգական ծագելոյ, որ և լուսաբեր, այգեբեր, աստղ առաւօտս, իսկ երեկոյն նախքան ըզմուտս արևու՝ կոչի Գիշերավար, և Երեկ. Եωσφορος. φωσφορος, Lucifer Արուսէակն զվեց ամիս արուսէակ է, և զվեց ամիս գիշերավար, նմանությամբ՝ Սատանայ (զիարդ անկաւ յերկնից Արուսէակն, որ ընդ առաւօտին ծագեր)»[31] և ապա՝ «Լուսաբեր... զոր ոմանք Ափրոդիտեայ, և այլք Հերայ անուանեն»[32] նախադասությունները ավելացնելով, կունենանք ամուր կռվաններ՝ որոշակի հետևությունների հանգելու համար։ Իրոք, այս նախադասությունները ցույց են տալիս, որ «Ձուկ» համաստեղությանը վերագրվող երկակի իմաստը առավել է շեշտվել Արուսյակի վերաբերյալ պատկերացումներով։ Վերջինիս լուսաբեր և գիշերավար հանդիսանալը, երկրակենտրոն պատկերացումներով առաջնորդվող նախնյաց պատկերացումներում, բնականաբար, պետք է, որ հանգեր Արուսյակի (=Ինաննա և այլն) գետնի տակ անհետանալու (հմմտ. Ինաննայի և այլոց գետնի ընդերքը գնալու հանգամանքը և այլն) մտայնությանը, և «զիարդ անկաւ յերկնից Արուսէակն» հեգնական հարցը պատահական չէ։ Տվյալ դեպքում, սակայն, կարևորը նախնյաց համոզվածությունն է Արուսյակի (=Ձուկ)՝ երկրի տակն անցնելու վերաբերյալ։ Բնական է, ուրեմն, որ երկրաշարժն ընկալվել է իբրև վեց ամսում մեկ պտույտ գործող Լևիաթան-Լեկեռն հսկա ձկան շարժման հետևանք[33]։ Այլ տարբերակում «գետնի տակը» կամ տիեզերական ծառի արմատի մասը, Ամպրոպայինից պարտված օձի (=ձուկ=վիշապ=սատանա) տեղն է։ Արուսյակն, այսպիսով, ինքը՝ Լյուցիֆերն է, սատանան, ձուկը և այլն, որն ընկալվել է իբրև երկակի բնույթ ունեցող աստվածություն, որի կեսը Լուսաբեր է, մյուսը՝ գիշերավար։ Մենք լիովին համաձայն ենք Ն. Ադոնցի այն կարծիքին, որ Արուսյակ-Անահիտ-Մեծ Մայրը երկսեռ է եղել[34]։ Պատահական չէ, որ Դումմուզի-Թամմուզից հետո ինքնակամ հեռանում է երկրի ընդերքը և ինքը՝ Ինաննա-Իշտարը։ Նույն ճանապարհով է գնում և Արեսի (=Հրատ, Մարս) կնոջ՝ Ափրոդիտեի տարփածու, փյունիկացիներից (իսկ սրանք էլ բաբելոնցիներից) փոխառնված Ադոնիսը, որը, տարվա մի կեսին մնալով Հադեսում, վերածնվում է՝ իր հետ բերելով բնության զարթոնքը։ Հայ իրականության մեջ այս առասպելի տարբերակը ինքնասպանությամբ կյանքին վերջ տված «ծովագնաց» Օննեսի և ապա Նինոսի կնոջ՝ հանրահայտ Շամիրամի (=Շամմուրամաթ-Սեմիրամիս) և Արա Գեղեցիկի պատմությունն է, որի քննությունից ելնելով՝ Ն. Ադոնցը դրում է. «...հայկական պատումի Ատիսը կրել է Արեսի անվան նման անուն..., որը մեզ տանում է հռչակավոր Էրի ուղղությամբ և դեպի Արա Գեղեցիկը... հայոց Էրը Ատիսի կրկնորդն է։ Հայկական

---

30 Գրդուկ որ կոչի Էֆեմերտե, «Արմաւենի» հրատ., Ե., 1992, էջ 2։

31 ՆՀԲ, հ. Ա, էջ 320—374։

32 Նույն տեղում, էջ 896։

33 Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Ավանդապատում, Ե., 1969, էջ 129—130։

34 Ն. Ա դ ո ն ց, Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 373—374։

էրի ավանդությունը քաջ հայտնի է։ Նա պատերազմում սպանվում է, բայց տասներկուերորդ օրը հարություն է առնում...»[35]։

Ո՞րն է Արեսի՝ նման անվանումը։ Անշուշտ, դա Աֆրոդիտեի ամուսին Արեսը չէ. Արեսը՝ Զևսի ատելի որդին, համապատասխանում է եդեմյուրակիր ամուսնու իր դերին ու դիրքին, և այս տեսակետից Ա. Շիրակացու այն նախադասությունը, թե Լուսնի «...զինակիցներն են Հրատը և Լուսաբերը... Լուսինը իգական կենդանատեսակներ ունի՝ հիշյալ երկու աստղերի ծագման զուգակցության պատճառով»[36], պարզորոշ ցույց է տալիս, թե ինչու է հենց Արեսը ամուսնու տեղը զբաղեցրել։ Այդ տարփածուն, ուրեմն, ուրիշն է եղել, և այս տեսակետից կարևորվում է Ն. Ադոնցի այն միտքը, համաձայն որի. «IX դ. մի հեղինակ գրում է, որ Լուսինը նվազ լուսավոր է, քան արևը, աստղը նվազ՝ քան Լուսինը, իսկ Արան նվազ՝ քան Լուցիֆերը։ Սեմիրամիսի հակառակորդ Արան, ուրեմն, դիտված է որպես աստղ։ Հայկական դիցաբանության մեջ Արայի ու Հայկի նախնական իմաստը մնում է անորոշ»[37]։ Ցավոք, այդ հեղինակը չի նշում Արա աստղի հունական կամ այլլեզվյան անվանումը, և մեզ մնում է ենթադրել միայն, որ մեռնող ու վերակենդանացող Ատիսը[38], Արան, ոչ այլ ոք է, քան նույն ինքը՝ Լուսաբերը. «...զոր ոմանք Աֆրոդիտեայ և այլք Էրայ անուանեն», որը և Ատիսի կրկնորդն է։ Ասվածը ենթադրել է տալիս, որ հնում Աստղիկ-Արուսյակը ընկալվել է որպես երկու աստղ, որոնցից մեկը գիշերավար է, մյուսը՝ լուսաբեր, ցայգաստղ։ Վերջինս նորածագ արևի շողերի մեջ ավելի աղոտ է երևում։ Հետևաբար, սկզբնապես Աստղիկ-Արուսյակն ընկալվել է ձկան տեսքով (=օձ, վիշապ=սատանա) երկսեռ մի աստվածություն, որի տնօրինության տակ էին գտնվում երկնային ջրերը։ Նրա ողորմածությունից էր կախված մարդկանց ջուր տալը կամ չտալը։ Այնքանով, որքանով երկնային ջրերը հոսում են Վիշապի (=ձուկ=օձ) պարտությունից հետո, դուրս է գալիս, որ այդ աստվածությունը բավական քմահաճ և ոչ այնքան բարի բնույթ է ունեցել, այլապես նա կամովին կտար ջուրը։ Հետևաբար, ձկնակերպ կոթողների առկայությունը ջրավազանների մոտ պատահական չէ. նախնյաց պատկերացումների համաձայն, ինչպես որ երկնային ջրերը «Ձկներ» համաստեղության, այնպես էլ երկրային ջրերը ձկնակերպ կուռքերի՝ աստվածության տեղապահների տնօրինության և պահպանության տակ էին գտնվում։ Իրոք, հետևելով ձկնակերպ ու միաձույլ (ձուկ+ցուլ) կոթողների տեղադրությանը, նկատում ենք, որ դրանք գտնվում են միմիայն ջրավազանների մոտ (Իմիրգեկ, Գյոլ-յուրտ, Թոխմախան լիճ, Բզովանի յուրտ, ինչպես և Կազնեֆեր և Այղր լճեր, Սրբահան ու Օրգոթ գետերի ակունքներում, ըստ Ատըրպետի)։ Այդ կուռքերի առջև ծիսական արարողություններ էին տեղի ունենում։ Խեթերը այդ ծիսակատարությունները սկսում էին «անձրևների տոնին», որոնք տեղի էին ունենում Ամպրոպի աստծո կուռքի առջև՝ շարունակվելով 38 օր։ Այդտեղ թագավորը (նա Ամպրոպայինի տեղապահն էր երկրի վրա և վիշապասպանի մարմնավորողը) և թագուհին գինի էին հեղում

35 Նույն տեղում, էջ 373։

36 Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, նշվ. աշխ., էջ 118։

37 Ն. Ա դ ո ն ց, նշվ. աշխ., էջ 380։

38 Նշելով, որ. «հայերի հայ ցեղանունը փորձ է արվել կապելու հնդեվրոպական «տեր, այր» բառի հետ», ինչպես և չեշտելով Ադոնիսի ու ամպրոպի աստծու անունների իմաստաբանական նույնությունը (տեր, պարոն), Ա. Ե. Պետրոսյանը գրում է. «Բերված փաստերը կարող են ինչ-որ չափով հաստատել դրականության մեջ արտահայտված Հայկի և Ատիսի անունների աղդակցության տեսակետը» [Ա. Ե. Պ ե տ ր ո ս յ ա ն, Հայկի և Բելի առասպելի վերլուծության փորձ (Հանրապետական դիտական նստաշրջան՝ նվիրված 1984—85 թթ. ագգագրական և բնագիտական դաշտային հետազոտությունների հանրագումարին, զեկուցման թեզիսներ, Ե., 1987, էջ 64—65)]։ Մեր կարծիքով, նման չեշտադրումը կարող է թյուրիմացության տեղիք տալ՝ հավասարություն դնելով Հայկի ու Ատիսի միջև։

ու հաց կտրում, իսկ գերագույն քուրմը համապատասխան շարժումներով պատմում էր «Անհետացած աստծո» և «Ամպրոպի աստծո ու Օձի պայքարի» (Վիշապամարտի) առասպելները, որոնք համապատասխանում էին տոնի բնույթին։ Դրանցից մեկը ցույց էր տալիս, թե երկնային ջրերը հոսում են Օձի պարտությունից հետո, մյուսում պատկերվում էր բնության զարթոնքը, որը սկսվում էր Ամպրոպի աստծո որդի, մեռնող ու վերածնվող (քնող ու արթնացող) աստված (Ատտիս, Արա Գեղեցիկ և այլն) քնած Տելեպինուսի արթնացմամբ ու վերադարձով։ Այս ծիսակատարության ժամանակ «Ամպրոպի աստծու մարդը» (քուրմը) Ամպրոպի աստծուն դիմում էր պատգամաբերի դերում հանդես եկող թռչնի միջոցով։ Այս տեսակետից ուշագրավ են կոթողներից երկուսի վրա (ըստ հրատարակված նյութերի) քանդակված արագիլները, որոնց ժողովուրդը իրավամբ գարնան ավետաբեր է դիտում, և «Օձասպան արագիլ դու արդար»[39] դարձվածքը հազիվ թե պատահականություն համարվի։ Հետաքրքիր է, որ ծիսակատարության ժամանակ, իբրև պտղաբերության ապահովման խորհրդանիշ է օգտագործվել այծի կամ խոյի գեղմը[40]։ Արդ, եթե տոնակատարությունները տևում էին 38 օր և «մի ժամանակ մարտին արեգակը լինում էր Խոյում» (մինչև մարտի 20-ը այն «Ձկներ» համաստեղությունում էր) և պտղաբերության ապահովման խորհրդանիշը այծի կամ խոյի գեղմն էր, ապա հավանական է դառնում տոնակատարությունների սկիզբը մարտի 20-ին (արևը մտնում է «Խոյ» համաստեղություն), իսկ ավարտը՝ ապրիլի 27-ին (արևը գտնվում է «Ցուլ» համաստեղությունում) համարելը։ Այդ ժամանակում գարունը վերջնականապես մանում է իր իրավունքների մեջ, այլաբանորեն՝ ձուկը (=օձ=վիշապ) պարտվում է ցուլի կողմից։ Պատահական չէ, որ Վահագնի մեհենատեղին, որ պաշտամունքի ութերորդ հռչակավոր վայրը լինելով, Մեծ Հայքի թագավորների զոհաբերության տեղն էր, գտնվում էր Քարքե լեռան լանջին, Եփրատ գետի վրա, Տավրոս լեռան դեմուդեմ (Փ. Բուզանդը օգտագործում է լեռան հայկական՝ «Ցուլ» անվանումը)[41], որը պաշտամունքի վայրերի բազմամարդ լինելու պատճառով Աշտիշատ էր անվանված։ Այստեղ էին դտնրվում ոչ միայն «Ոսկեհատ, Ոսկեմայր Անահիտի», այլև՝ «Աստղիկ դիցուհու մեհյանը, սենյակ Վահագնի կոչված», որը Ափրոդիտես է»[42]։ Վերջին նախադասությունը, լիովին համապատասխանելով «...Լուսնին զԱրտեմիս (այսինքն, զԱնահիտ), և Արուսեակ զԱստղիկ (այսինքն՝ զԱփրոդիտե)» բացատրությանը[43], տարակուսելի է դարձնում Ա. Շիրակացու աշխատության այն հատվածը, որտեղ նշված է, թե Ափրոդիտեսը=Վեներային=Լուսաբերին=Անահիտին[44]։ Կասկածել, սակայն, Ա. Շիրակացուն անվանումների, բնականաբար և Լուսնի ու Արուսյակի միջև հավասարություն դնելու մեջ, մեղմ ասած, անհեթեթություն է։ Անտարակույս, Լուսինն ու Լուսաբերը չէին նույնացնում և հները։ Հավանական է, ուրեմն, Ա. Գ. Արրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի այն ենթադրությունը, թե տվյալ հատվածի առկայությունը Ա. Շիրակացու աշխատանքում հետագա ընդմիջարկության արդյունք է[45], որը և ենթադրել է տալիս, թե զարգացման ընթացքում Արուսյակն ու օտարամուտ Անահիտը, ինչպես կտեսնենք և այլ անվանումների կապակցու-

---

39 ՆՀԲ, հ. Բ., էջ 1026։

40 В. Г. Ардзинба, Ритуалы и мифы древней Анатолии, М., 1982, с. 9—10, 83, 123.

41 Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց (Բարգմ., նկրագ., ծանոթ. Մտ. Մալխասյանցի), Ե., 1968, էջ 90։

42 Ագաթանգղեղոս, Պատմություն Հայոց (Բարգմ., նկրագ., ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի), Ե., 1977, էջ 130։

43 ՆՀԲ, հ. Բ, էջ 771։

44 Տե՛ս Անանիա Շիրակացի, նշվ. աշխ., էջ 116։

45 Նույն տեղում, էջ 343, ծան. 34։

թյամբ, համանման գծերի շնորհիվ իրոք որ նույնացվել են, ինչը և մատնանշվել է հետազոտողների կողմից։ Այս միտքը փաստելու է գալիս. «Հայկանուն դյուցազնի, Օրիոն, աստեղատուն յերկինս, մերձ առ բազմաստեղս, առընթեր ուննալով կամ առ ոտս ե զշուն. վասն որոյ և Հայկ առ քերթողս համարեալ է որպես գործակից Անահտոյ...»[46] նախադասությունը, որից երևում է, թե Աստղիկը Անահիտով է փոխարինված, իսկ Հայկը՝ Վահագնով։ Ամենայն հավանականությամբ Աստղիկ-Անահիտը ևս, իր միջագետքյան քրոջ՝ Ինաննա-Իշտարի պես դիտվել է երկնքի սրբազան քրմուհի, որը երկրի վրա, տաճարներում իր տեղապահ քրմուհի-սպասուհիներն է ունեցել, որոնք զլցուհու օրինակով զբաղվում էին սրբազան անձնատվությամբ պայմանավորված սերնդաշարունակությունն ապահովելու մտայնությամբ, բայց ոչ ամենևին դրա գռեհիկ իմաստով։ Դրանով ասվում էր ամեն ինչ։

Զմռան և մոտալուտ գարնան «հակամարտությունը», որն ուղեկցվում էր ամպրոպներով, որոտով, կայծակով, քամիներով ու անձրևով, ավետելով երկար սպասված գարնան սկիզբը, առասպելում արտահայտվեց իբրև վիշապի (=ձուկ) և ցուլի կերպար ունեցող աստվածությունների (համաստեղությունների համապատասխան) պատերազմ։ Հայկ-Օրիոնի կապը ցուլ համաստեղությանը պատահական չէ։ Արդարացված է և Թեշուբ-Թեյշեբայի (ամպրոպի աստվածը) մշտապես ցուլի վրա կանգնած պատկերվելու հանգամանքը։ Բնականաբար, Եղնիկ Կողբացու այն խոսքերը, թե. «Եվ եթե այնպիսի վիշապը մեջտեղից վերցվի (ադա դա կլինի) ոչ թե եզ կոչվածներով...»[47] ցույց են տալիս, թե որքան կենսունակ են եղել դարերի խորքից եկող պատկերացումներն ու հավատալիքները, որոնց արձագանքները մեզ են հասել ի դեմս Եղիա Մարդարեի ու սբ Գևորգի։ Ավելին, օձ-սատանա զայթակղիչը անփոփոխ պահպանվեց Հին Կտակարանում, իսկ սիրո աստվածուհին իր տեղը զիջեց «խաբված» Եվային[48], որի ամուսնու Արես և այլն անունը փոխարկվեց Ադամի։ Այս անունների ետևում «վիշապամարտի» սկզբնական բովանդակությունը խիստ աղոտ է նշմարվում։ Նախնյաց համար այն եղն է (մի, միակ, եզակի), ցուլը. «...այն է աստեղատունն ընդ Հայկ և ընդ բազմաստեղս եռանկիւնի ձևացեալ աստեղրք, որպես երևի և ճակատ ցլու հանդերձ կզկաւն»[49], այսինքն՝ այն, ինչ և քանդակված է «ցլագլուխ» կուռքերի վրա։ Վերջիններիս կապը, սկզբնապես հայոց ամպրոպային աստվածություն Հայկի հետ, ակնհայտ է։ Ցավոք Հայկ ու Բելի բավական ձևափոխված ավանդության մեջ ոչինչ այլևս ուղղակիորեն չի հիշեցնում վիշապամարտը։ Արական Բելը (աքքադերեն՝ «տեր»), որը Ներոովթն է, շումերների Էնլիլը, բաբելոնցիների Մարդուկը, իրանական Արամազդը, որի մասին փաստում են Թովմա Արծրունին և Անանուն շարունակողը[50], ոչինչ ընդհանրություն չունեն որևէ իգական աստվածության հետ, որը հուշեր, թե Հայկի հակառակորդը սկզբնապես կին է եղել։ Այս տեսակետից կարևորվում է Թովմա Արծրունու պատմության այն դրվագը, որտեղ հեղինակը, խոսելով Թիգլաթպալասար Գ-ի կողմից մ. թ. տ. 729 թ. Բաբելոնը գրավելու մասին, գրում է. «Նորոդեցին Բելից լքված թագավորական

---

46 ՆՀԲ, հ. Բ, էջ 31։

47 Եղնիկ Կողբացի, նշվ. աշխ., էջ 81։

48 Այս կապակցությամբ Լ. Արբրահամյանը գրում է. «...գայթակղիչ օձը հաճախ պատկերված է եվայի դեմքով։ Եվայի անունը հավանաբար սկիզբ է առնում արամեական «օձ» բառից։ Մեղսագործության սյուժեն... վերարերում է առաջին երկվորյակների վերակառուցված առասպելին. երկսեռ երկվորյակները մեղանչում են արյունապղծությամբ» (Լ. Աբրահամյան, Վիշապամարտը և առաջին գոհի գաղափարը, Հանրապետ. գիտ. նստաշրջ. թեզիսներ, Ե., 1984, էջ 3)։

49 ՆՀԲ, հ. Ա, էջ 917։

50 Թ. Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1978, էջ 44։

առաջին պալատը, ինչը Աստարտի տաճարն էր»[51]։ Ճիշտ է, սա շատ թույլ կռվան է, բայց արդեն խոսում է Հայկ ու Բելի ավանդության մեջ փյունիկյան սիրո և պտղաբերության աստվածուհի Աստարտին (=Իշտար=Աստղիկ են), սկզբնապես որոշակի դեր հատկացված լինելու մասին, որը հետագայում սրբագրվելով, առանձին առասպելի է փոխարկվել։ Անվանափոխվեց և Հայկը. իրանական ազդեցության տակ նա սկզբում փոխարկվեց Արամազդի։ Աստղիկի կապը «տուն Արամազդայ», որին պատմահայրը «ամպրոպային Արամազդ» է անվանում[52], պատահական չլինելով, կրկին խոսում է վերն արված ենթադրության օգտին։ Հայկի նույնացումը Արամազդի հետ, սակայն, սխալ է, քանի որ «Լուսնթագ (Զևս, Դիոս, Ցուպիտեր)—մին ի մոլորակայ բարձրագունից՝ լուսնաշոյլ յետ արուսեկի, որ և ի կարգս դից հեթանոսաց իբր թագաւոր և հայր շածոց, այն է Արամազդ կամ Որմիզդ...»[53]։ Ասվածից հետևում է, որ եթե գերագույն աստվածության իմաստով Հայկ-Արամազդ նույնացումը ճիշտ է (այս նույնացմանը նպաստում է և Արամազդ-Ահուրամազդա-Որմիզդի՝ բարի էակների արարիչ և խավարի աստծու՝ Արհմնի երդվյալ թշնամի լինելու հանգամանքը), ապա համաստեղության առումով, որը տվյալ դեպքում առաջնային է, միանգամայն անընդունելի է, քանի որ նման նույնացումը կհանգեցնի Ցուլ=Խոյ համաստեղությունների միաձուլմանը։ Անվանափոխվելով հանդերձ՝ Հայկը երբեք չկորցրեց ամպրոպայինի, հաղթողի իր հատկանիշները։ Դրա լավագույն ապացույցը. «Աստղիկ դիցուհու մեհյանը, ուենյակ Վահագնի կոչված...»[54] նախադասությունն է։ Իսկ Վահագնին հետագայում հայոց նախնիներից ոմանք հայերի նախնի անվանեցին[55]։ Այսպիսով, ինչպես Աստղիկ-Արուսյակի, այնպես էլ Հայկի դեպքում ստանում ենք անհաջող անվանափոխումների շղթա (Հայկ=Արամազդ=Վահագն=Հերակլես), որոնք պայմանավորված են եղել հայոց պատմության վայրիվերումներով, արտաքին կապերով։

Հանրագումարի բերելով հետազոտությունների արդյունքները՝ կարող ենք նշել, որ ձկնակերպ ու ցլագլուխ կուռքերը արտահայտել են «Ցուկ» և «Ցուլ» համաստեղությունների գաղափարը, որոնք համապատասխանարար դիտվել են ջրերի տիրակալ և հաղթանակով ջրերի ելքին ազատություն տվող աստվածություններ, որոնք և «Վիշապամարտի»՝ միաժամանակ ծնված գլխավոր դերակատարներն են։ Հայ իրականության մեջ այդ աստվածությունները սկզբնապես Հայկն ու Աստղիկն են, որոնք, անվանափոխվելով ու լրացվելով օտարամուտ անուններով ու տարրերով, ծնունդ տվեցին «Վահագն», «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելներին, այլ աստվածությունների, որոնց հիշողությունը վերացնելու համար քրիստոնյա հայրերը ջանք ու եռանդ չխնայեցին, ինչով և կարծում ենք, պայմանավորված է կուռքերի գերակշռող մեծամասնության՝ հողով ծածկված լինելու փաստը։

БЫЧЬЕГОЛОВЫЕ СТАТУИ ИЗ ВАРДЕНИССКИХ ГОР И К ВОПРОСУ ОБ ИНТЕРПРЕТАЦИИ «ВИШАПАКАРОВ»

О. С. ХНКИКЯН

Резюме

Обнаруженные в летней кочевке «Атташ» с. Маден Мартунинского р-на и в перевале Сулема две бычьеголовые статуи известны в лите-

51 Նույն տեղում, էջ 58։

52 Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 232։

53 ՆՀԲ, հ., Ա, էջ 903։

54 Ագաթանգեղոս, նշվ. աշխ., էջ 130։

55 Անանիա Շիրակացի, նշվ. աշխ., էջ 95։

ратуре под названием «вишапы». Эти статуи рассматриваются нами в качестве идолов божеств созвездий Рыбы и Тельца, олицетворяющих конец зимы и начало весны. Именно смена сезонов рассматривалась древними как борьба Громовержца (Бык) и Змеи (=рыба=вишап), легших в основу общеизвестного индоевропейского мифа. На наш взгляд, Хайк (он же Арамазд=Ваагн=Геракл) изначально ассоциировался у армян с Громовержцем (Хайк=Орион), а Астхик — Арусяк (=Анаит) с Рыбой (=змея=вишап=сатана).

Следовательно, рыбообразные и бычьеголовые изваяния олицетворяли противоборствующие божества, которые в дальнейшем стали известны в качестве св. Георгия и сатаны. Как нам кажется, именно беспощадная борьба отцов армянской церкви с язычеством, стремление искоренить любые следы языческих верований и является основной причиной того, что эти статуи засыпаны землей.